

«Երևան քաղաքի բաշխումն ըստ տարածքային գոտիների սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունիսի 1-ի թիվ 580-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

_____ 2019 թվականի N -Ն

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ
1-Ի**

ԹԻՎ 580-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19.8-րդ հոդվածի 5-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Սահմանել Երևան քաղաքի բաշխումն ըստ տարածքային գոտիների՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունիսի 1-ի «Երևան քաղաքի բաշխումն ըստ տարածքային գոտիների սահմանելու մասին» թիվ 580-Ն որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից:

ԵՐԵՎԱՆ ԲԱՂԱՔԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԳՈՏԻՆԵՐԻ

1. Երևան քաղաքում կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին մետաղադրամով և (կամ) թղթադրամով շահագործվող ավտոմատների միջոցով սննդի առևտրի կազմակերպման և մետաղադրամով շահագործվող ավտոմատների միջոցով խաղերի (բացառությամբ շահումով խաղերի և խաղատների գործունեության) կազմակերպման գործունեության տեսակների մասով արտոնագիր տրամադրելու նպատակով պետական տուրքի հաշվարկման համար լրացուցիչ գործակիցների կիրառման նպատակով հիմք ընդունվող՝ Երևան քաղաքի գոտիները նկարագրվում են հետևյալ կերպ.

Գոտին	Տարածքը
Առաջին	Առաջին գոտու տարածքը սահմանագծվում է Մաշտոցի պողոտայով սկսած՝ Լուսավորչի փողոցի հետ հատումից մինչև Սարյան փողոց, Սարյան և Մոսկովի մինչև Մարշալ Բաղրամյան պողոտա, Մարշալ Բաղրամյան պողոտայով մինչև Բաղրամյանի առաջին փակուղի, այնուհետ Իսահակյան փողոցով մինչև Թամանյան փողոցով մինչև Անտառային փողոց, Անտառային փողոցով մինչև այնուհետ՝ Տերյան և Աբովյան փողոցների վերջնամասով՝ ներառյալ Աբովյան փողոցով մինչև Կորյունի փողոց, Կորյունի և Նալբանդյան փողոցներով մինչև հետ հատվելը, Խանջյան, Ագաթանգեղոս, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ փողոցն պողոտա:
Երկրորդ	Երկրորդ գոտու ներքին սահմանները համընկնում են առաջին գոտու տարածքի փողոցների հետ, իսկ արտաքին սահմաններն անցնում են Աբովյան պուրակի փողոցով մինչև Կորյունի փողոցի հետ հատվելը, այնուհետ Չարենցի և Նար-Տիգրան Մեծի պողոտայով մինչև Քրիստափորի փողոց, Քրիստափորի փողոցով մինչև Արշակունյաց պողոտան, Կոմիտասի զբոսայգու հյուսիսային սահմանագծով գետը, Հրազդան գետով մինչև Հաղթանակի կամուրջ, այնուհետ Հաղթանակի պողոտայի սկզբնամասով, Սուրբ Սարգիս եկեղեցու շրջակայքով՝ ներառյալ՝ տարածքը, այնուհետ Պարոնյան փողոցով մինչև Ձորափի փողոց, Ձորափի փողոցով մինչև Ուրուզվայի հրապարակ, շրջանցելով Ուրուզվայի հրապարակը՝ կրկին Ձորափի փողոցով մինչև Պարոնյան փողոցի հետ հատումը, Պարոնյան և Պռոշյան փողոցներով մինչև հետ հատումը, Այգեձորի փողոցով մինչև Ջեյմս Բրայսի փողոցի հետ հատումը փողոցով մինչև Սոսեի փողոցի հետ հատումը, Սոսեի փողոցով մինչև Վաղարշապատի փողոցի հետ հատումը, այնուհետ Անտառային փողոցով մինչև Թամանյան փողոցի հետ հատվելը:

Այլ

Երևան քաղաքի վարչական տարածքում ներառված՝ առաջին և երկրորդ գր
չընդգրկված տարածք: